



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2022 թվականի թիվ 82-Ա

ք. Երևան

«ՅՈՐՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2022 թվականի ապրիլի 25-ին հարուցված թիվ 9 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2022 թվականի ապրիլի 25-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻՎԱՌՈՒ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմումում նշված է «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրային հիմունքների վերահաղորդելու փաստի վերաբերյալ:

Ըստ Ընկերության դիմումի՝ «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ընկերության կողմից վերահաղորդվում են «ՓՄԵՅՈՒ» և «ՄԱԿ ՓՄԵՅՈՒ 1 HD» սպորտային տեսալսողական ծրագրերը:

Ընկերության դիմումում մասնավորապես նշված է.

«Ընկերությունը իր երեք VIVARO SPORT, VIVARO SPORT+ և VIVARO ARENA տեսալսողական ծրագրերով ցուցադրում է սպորտային միջոցառումներ՝ ունենալով ցուցադրման բացառիկ իրավունքներ ՀՀ տարածքում: Նշված սպորտային ալիքները՝ «ՓՄԵՅՈՒ» և «ՄԱԿ ՓՄԵՅՈՒ 1 HD» ՀՀ տարածքում վերահաղորդվում են առանց «ՎԻՎԱՌՈՒ ՄԵԴԻԱ» ԱՊԸ համաձայնության, որի պայմաններում խախտվում է ինչպես «ՎԻՎԱՌՈՒ ՄԵԴԻԱ» ԱՊԸ-ի, այնպես էլ «ՈՒԵՖԱ» (Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միություն) (անգլ.՝ UEFA-Union of European Football Associations), «Եվրասիական հեռարձակման» սահմանափակ ընկերություն (անգլ.՝ Eurasian Broadcasting Enterprise Limited), «Քվեստ Մեդիա» (Quest Media), «ՄԻ ԷՍ ԱՅ ԷՆԹԸԼԸԹԵՅՆՄԵՆԹ ԻՆԿ» (CSI Entertainment Inc) մրցաշարի հեռարձակման իրավունքների իրավատերերի իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Ընկերությունը խնդրում է աջակցել վերոնշյալ տեսալսողական ծրագրերի իր հեռարձակման իրավունքները:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմումը՝ 2022 թվականի ապրիլի 25-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի ապրիլի 28-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորի կողմից ներկայացվել է հետևյալ պարզաբանումը.

«ՓՄԵՅՕԼ» և «ՄԱԿ ՓՄԵՅՕԼ 1 HD» ծրագրերի վերահաղորդում «Յորնեթ» ՄՊ ընկերության կողմից չի իրականացվում, սակայն նշված ծրագրերը և մի քանի այլ ծրագրեր որոշ ժամանակ տեխնիկական սխալի պատճառով առկա է եղել բաժանորդների ծրագրերի ցանկում, սակայն պասիվ, այսինքն սեղմելիս ծրագիրը չի բացվել՝ չի վերահաղորդվել բաժանորդներին: Խնդիրը, աշխատանքներից հետո վերացվել է, ցանկում այդ ծրագրերը առկա չեն»:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 20-ի թիվ 25-Ա հրամանը՝ իրականացվել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2022 թվականի մայիսի 23-ին կազմվել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն, համաձայն որի՝ ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը 12:00-12:30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից չեն վերահաղորդվում «ՓՄԵՅՕԼ» և «ՄԱԿ ՓՄԵՅՕԼ 1 HD» տեսալսողական ծրագրերը :

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերը սահմանում են .

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց»:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացածանձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդող տեսալսողական ծրագրերի մասին: Ցանցային օպերատորի կողմից 2022 թվականի փետրվարի 1-ին ներկայացված վերահաղորդող տեսալսողական ծրագրերի ցանկում «ՓՄԵՅՕԼ» և «ՄԱԿ ՓՄԵՅՕԼ 1 HD» տեսալսողական ծրագրերը ներառված չեն:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում՝ առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ ներկայացրած ապացույցներով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկում, իսկ ցանցային օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Տվյալ դեպքում, վարչարարության ընթացքում Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված դրույթներին համապատասխան իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, որի արդյունքում էլ 2022 թվականի մայիսի 23-ին արձանագրել է, որ խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի կողմից չեն վերահաղորդվում, և ցանցային օպերատորը իր ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է այն մասին, որ նշված տեսալսողական ծրագրերը իր կողմից չեն վերահեռարձակվում:

Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները արձանագրում է, որ վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածում Ընկերության կողմից ներկայացված ապացույցները (ցանցային օպերատորի տեսալսողական ծրագրերի արտատպվածքները), որոնք ըստ Ընկերության վկայում են ցանցային օպերատորի կողմից կատարված իրավախախտման փաստը, ինչպես նաև բացատրությունները հիմնավոր և բավարար չեն, իրավախախտման փաստը ապացուցելու, ուստի արձանագրում ենք, որ ցանցային օպերատորի կողմից Օրենքի խախտում թույլ չի տրվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ ցանցային օպերատորի և Ընկերության միջև չկա կնքված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման լիցենզիոն պայմանագիր, իսկ տեղում դիտարկման արդյունքում էլ պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից դիմումում նշված տեսալսողական ծրագրերը չեն վերահաղորդվում:

Միաժամանակ արձանագրելով նաև այն փաստը, որ ցանցային օպերատորի կողմից 2022 թվականի փետրվարի 1-ին ներկայացված վերահաղորդող տեսալսողական ծրագրերի ցանկում նույնպես «ՓՄԵՅՕԼ» և «ՄԱԿ ՓՄԵՅՕԼ 1 HD» տեսալսողական ծրագրերը ներառված չեն, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ

վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 9 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածն ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերի, 49-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 8-րդ մասի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ՅՈՐՆԵԹ»ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 9 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

S. ՀԱԿՈԲՅԱՆ

13 հունիսի 2022թ.
ք. Երևան